

## ԳԼՈՒԽ Ժ

Մենք Ռշտունեաց Ոստանի մէկ դահլիճը տեսանք, ուր Թեոդորոս հայ իշխանաց ոմանց հետ երկրին պաշտպանութեան կետերը զօրացնել պատասպարել կը մտածէր, այնպէս որ այս լեռնային երկրին, ինչպէս էր Յայաստան, զանազան կիրճերն եւ անցքերը բռնելով, նաեւ զօրաւոր թշնամուոյ մը քիչ զօրքով երկայն դիմադրութիւն ընել դիւրին կը լինէր եւ այնպիսի նեղ տեղուանք պատերազմիլ բազմաթիւ զօրաց դեմ Յաղթութիւն կրնար պարգեւել:

Թեոդորոսի մարզպանութեան հասնիլը հազիւ մէկ-երկու տարի էր, բայց Յայոց զօրավարի անունը եւ պատիւոյ տասը-տասնհինգ տարի էր, որ կը կրէր. այնպէս որ Վարազտիրոց Բագրատունուոյ եւ Դաւիթ Սահառունուոյ մարզպանութեանց ժամանակ ոչ միայն սոսկ իբր զօրավար, այլ իւր անձին գերազանցութեան եւ մտաց ու զինուց կարողութեամբ մեծ ազդեցութիւն ուներ երկրին մէջ, եւ այն աստիճան, որ մարզպաններուն անունը երբ հազիւ թէ կը յիշուէր՝ Թեոդորոսի անունն էր, որ կը գործէր: Ամառները շատ անգամ Այրարատայ եւ Բարձր Յայոց կողմերը Թեոդոսուպոլիս եւ Դուին գտնուելով, ձմեռները գործերուն դադարման ժամանակ Ոստանը կ'ուզար հանգչելու, թէպէտ այդ անդադար եւ գործունեայ բնաւորութիւնը հանգչել չէր գիտեր: Կը յիշեն ընթերցողք, թէ մեր այս պատմութեան սկիզբ լսեցինք, որ Ռշտունեաց Սեթայ տիկին առնացի բնաւորութեամբ ինչպէ՛ս կառավարութեան ոգի ուներ եւ գիտէր երկիրը յանձանձել իշխանին բացակայութեան, որ սովորական բան էր: Ռշտունեաց Ոստան կատարեալ արքունական պալատի կերպարանք ուներ. աւանին եւ ծովուն մօտ բարձրացեալ սարաւանդին վրայ պարսպապատ եւ ամրակառոյց, որին վերջին ամրութիւնն Աղթամարայ կղզին էր: Ծովահայեաց դահլիճը, ուր ձմեռները Թեոդորոս նստած գրեթէ բոլոր Յայաստան կը կառավարէր, ամառները Սեթայի՝ Ռշտունեաց եւ Վասպուրականի մեծ մասին կառավարութեան ատեանն էր, ուր շարունակ սուրհանդակներ կը հասնէին՝ հեծելոց սպառազէն խումբեր կ'ուզային եւ կ'անցնէին Նորա պատուհաններուն առջեւէն, ամէն աստիճանի հիւրեր՝ իշխանագունք եւ բարձրաստիճան եկեղեցականք կ'երթեւեկէին, եւ այդ կինը որ ձմեռներն իբր թէ կը քաշուէր եւ իշխանին կը թոյ զուր երկրին կառավարութիւնը, դարձեալ ինքն էր ամէն բան տեսնողը, վասնզի Թեոդորոս այդ տեսակ գործերը եւ աղերսագիրները Տիկնոջ կ'ուղարկէր: Ուստի Ռշտունեաց ընդարձակ գաւառին բնակիչք գիտէին ում պէտք էր դիմել, եւ իշխանուհին կանանոցին առաջին յարկը դիւանատուն մը դարձուցեր էր, որու մէկ քանի սենեակը Ատոմ Շահունիի սահման եալ եւ ուր նա միշտ գաւառին զինուորական գործերուն յանձանձիչն էր՝ ինչպէս ըսինք: